№ 183 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26 1904 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26 № 183

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Սեպտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը կարժենայ ՁՈՐՍ ռուբլի.

Դիմել Тифлисъ, редакція «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև սեպտեմբերի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղօրօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի.

Մէկ ամսով բաժանորդագրվել ցանկացողները վճարում են Մէկ ռուբլի.

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կեանքի թելադրութիւնը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խօլերայի դէմ. Մակերևութաբար մի նայէք. Նամակ Ասիաբաղից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սէն-Լուի աշխարհահանդէսը.

ԿԵԱՆՔԻ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Ինչպէս յիշում են մեր ընթերցողները, երկու տարի սրանից առաջ Վեհափառ Կաթողիկոսի կօնդակով մի փոքր դիւրութիւն տրվեց չհաս ազգակիցների ամուսնութեան վերաբերութեամբ. Այն է՝ չհասութիւնը մի աստիճան պակասեցրվեց.

Դա մի քայլ էր բաւարարութիւն տալու կեանքի մէջ արտայայտված անհրաժեշտութեան.

Արդարև իրական կեանքը վաղուց պակասեցրել է չհասի աստիճանները. Եւ մենք իրականութեան մէջ ականատես ենք բազմաթիւ դէպքերի, երբ պսակի թոյլտուութիւններ են տրված այս և այն ամուսնացող զոյգի համար.

Բացառութիւնների թիւը կեանքի մէջ այնքան շատացաւ, որ պահանջ էր զգացվում որոշ օրինական ձևակերպութիւն տալ նրան.

Մենք լաւ գիտենք, որ մեր հին կեանքում, մեր հին ընտանիքում սովորութիւնը, ծէսը, աւանդութիւնը մեծ ոյժ ունէին կենցաղավարական գործառնութիւնների մէջ. Յարաբերութիւնները առ միշտ շատ որոշ կերպով ծրագրված ու սահմանված էին. Կին մարդը յաճախ մատնված էր նոյն իսկ լռութեան կամ չը խօսկանութեան տղամարդի հետ. Պսակները կատարվում էին ոչ այնքան պսակվողների թելադրութեամբ, որքան ծնողների կամ նոյն իսկ տոհմերի արտաժադրութիւններով. Անհատականութեան, մարդկանց ինքնուրոյն զգացմունքներին և սիրոյ արտայայտութիւններին սահմանափակ տեղ էր թողնված կեանքի մէջ. Մարդիկ գնում էին մի անգամ սահմանված կարգով, չը ցանկանալով խախտել նրան.

Եթէ ուշադրութիւն դարձնենք ընտանիքի կազմակերպութեան, մենք նոյնպէս կը նկատենք, որ մեր նորագոյն ընտանիքը բաւական տարբերվում է հին ընտանիքից. Մեր այժմեան ընտանիքը բաղկացած է շատ քիչ անդամներից և ընդհանրապէս աշխատում է իր մէջ չը պահել ամուսնական մի զոյգից աւելի. Մինչդեռ մեր հին ընտանիքում մի տան ծածկի տակ ապրում էին մի քանի ամուսնացած զոյգեր և անդամների թիւը հասնում էր երեսնի, քառասնի և յիսունի. Այդպիսի մեծ ընտանիքում նպատակայարմար էր ճանաչվում ընդարձակել չհասութեան ծաւալը և առհասարակ թոյլ չը տալ, որ մի և նոյն ընտանիքում ապրող անհատները դէպի միմեանց տածէին ուրիշ զգացմունք, քան շատ ազգակցականը.

Իսկ վերջին տասնեակ տարիներում, երբ սկսվեց խախտվել սովորութեան և աւանդութեան ոյժը, երբ հին մեծ ընտանիքը բաժանվեց մի քանի ինքնուրոյն մանր ընտանիքների, երբ անհատականութեան զգացմունքը սկսեց զարգանալ մարդկանց մէջ, կամաց-կամաց աւելացան նիւթեր նոր յարաբերութիւնների համար և կեանքը սկսեց նոր կարգերի պահանջ արտայայտել.

Ռուսաց օրէնսդրութիւնը, որ ամուսնութեան վերաբերեալ խնդիրներում չափազանց պահպանողական էր, վերջին ժամանակները մի քանի կարգադրութիւններ արաւ, որով դիւրացնում է բաժանված ամուսինների կրկին ամուսնութիւնը և պակսեցնում է չհասութեան աստիճանը զգալի կերպով. Ռուսաց Սինոդը իր յունիսի 20-ի որոշմամբ սահմանել է, որ այսուհետև թեմական իշխանութիւնները անարգել կերպով և առանց սինոդին դիմելու թոյլ տան պսակներ ազգակցութեան չորրորդ աստիճանում. Բացառութիւն արված է միայն այն դէպքերի համար, երբ մէկը ցանկանում է պսակվել իր եղբօր քենու կամ իր քրոջ տալի հետ. Այդ դէպքում պսակ չէ թոյլատրվում.

Կեանքի պահանջը ստիպեց այդ դիւրութիւնները տալ պսակների վերաբերութեամբ, որպէս զի օրինական լինի այն, ինչ որ անհրաժեշտութիւնը պէտք է ինքն ըստ ինքեան իրագործէր կեանքի մէջ կամ իբրև օրինական բացառութիւն և կամ այլապէս իբրև գայթակղութիւն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱՅԻ ԴԷՄ

—

Ինչպէս արդէն մի քանի անգամ ասել ենք, այս տարի խօլերան ծնունդ է առել Քէրբալայում, շիա աղանդաւորների ուխտատեղում, որ գտնվում է Թիւրքիայի հողի վրա, Բաղդադից մի քիչ հարաւ-արևմուտք. Այդտեղից ուխտաւորները բերել են հիւանդութիւնը Պարսկաստան և տարածել համարեա ամբողջ երկրում. Պարսիկ կառավարութիւնը, աչքի առաջ ունենալով վերևում ակնարկված իրողութիւնը, մի ամբողջ տարով արգելել է Քէրբալայ ուխտգնալը.

Ուշացած կարգադրութիւն. Երբ բոլոր հաղորդագրութիւնները միաբերան վկայում են, որ Քէրբալայում խօլերան արդէն վերջացել է, պարսիկ կառավարութիւնը նոր միայն մտածում է «խօլերայի ներմուծման դէմ միջոցներ ձեռնարկելու» մասին... Նա մի տարով արգելում է ուխտագնացութիւնը, այն ինչ այժմ Թիւրք կառավարութիւնը պէտք է արգելէր պարսիկ ուխտաւորների մուտքն իր երկիրը.

Այդպէս է արևելքը. Մարդիկ այնտեղ չեն շտապում. «Եավաշ-եավաշ»—ահա արևելքի նշանաբանը. Ժամանակը ոչ միայն ոսկի չէ, այլ նոյն իսկ երկաթ, քար էլ չէ...

—Քիրմանշահից հիւպատոսների հաղորդած պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ խօլերան այնտեղ համարեա դադարել է. Իբր թէ ամենօրեայ մահացութեան դէպքերը երկուսից չեն անցնում. Իսկ այդ նշանակում է, որ իրերն իրանց բնական ընթացքն են ընդունել.

—

Թիւններն են ասոնք.

Ուշագրաւ է աշխարհահանդէսի թանգագին քարերի բաժինը. Ադամանդեայ և ոսկեայ իրեղէնները տեղաւորած են «հօլ օֆ կոնկրես» սենեակը, որոնց վրա կը հսկեն ամենայն աչալուրջութեամբ և զինուած անգլիական և տեղային ոստիկաններ. Իրեղէններն են՝ փոքրիկ ոսկիէ մնդուկներ, փղոսկրեայ սանդրներ ադամանդապատ, ժամացոյցներ ալմաստապատ, ոսկէ բարակ շղթաներ և ոսկէ թելով հիւսուած թամբեր, և շարք մը ուրիշ իրեղէններ, և այլն. Այս ամենուն արժէքը 6,000,000 կը հասնի. Բնիկ Կ. պոլսեցի պ. Ա. Էգնայեան, որ քառասուն տարիներէ ի վեր Պարիզ հաստատուած է և որը Պարիզի ամենանշանաւոր ադամանդավաճառներէ մին կը ներկայացնէ, որուն գործարանին մէջ յիսունէն աւելի մարդիկ կը գործեն իր գործակատարներին Պ. Հարէնցի հովանաւորութեան տակ.

«Փալէս օֆ մինուֆէքչըրս»-ի ֆրանսիական բաժինին մէջ, մեծ հաճոյքով կը կարդանք ադամանդավաճառ պ. Էգնայեանի անունը, որ հետևեալ ադամանդները ցուցակագրած է այդ բաժինին մէջ. Կաղնիի չափ մեծութեամբ ադամանդ մը կարժէ 50,000 ֆ. և. կապոյտ կտոր մը թէև անկէ քիչ մը փոքր, բայց կարժէ 100,000 ֆ., դեղին կտոր մը կարժէ 40,000 ֆ., կան նաև ութ և ինը կտորներէ դարձեալ շարք մը ադամանդներ, որոնց արժէքն է 100,000 ֆ. և այլն. ասոնք ինչպէս ըսինք, պզտիկ տեղ մը գրուած են այդ շարքին մէջ, որպէս գեղեցիկ ցոյցեր ֆրանսիական երկրէն.

Յունիսի սկիզբը աշխարհահանդէսը այցելուների թիւը օրական մէկ միլիոնից աւելի եղած է.

Մայիս ամսուայ վերջին շաբթուն նշանաւորը և ընտիրը եղած է նորին կայսերական բարձրութիւնը՝ իշխան Փիլիպ Զինաստանէն, և օր. Ալիս Ռուզվէլտ՝ իրենց դուստր Միացեալ-Նահանգաց, և նախագահ պ. Թէօդոր Ռուզվէլտ.

Գեղամ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԷՆ-ԼՈՒԻԻ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԷՍԸ

(Նամակ Ամերիկայից)

I

Սէն-Լուի միջազգային քաղաք մէ դարձեր, գիտական աշխարհի կեդրոնը. Ամեն տեղէ, ամեն երկրէ խառներամ բազմութիւնը լցված է, իւրաքանչիւր քայլափոխին կարելի է տեսնել տարբեր երկիրներու տարբեր մարդիկ, խառնիճաղանճ խումբեր, տարբեր լեզուների, տարբեր հագուստների, որոնք կարելի է համարել Ամերիկայի համար նորութիւններ. Մարդ մէկ կողմին միւսը դառնալու ժամանակ նորութիւն մը կը տեսնէ. Քաղաքը, ինչպէս և հանդիսավայրը Բաբիլոնի աշտարակաշինութեան անհասկանալի լեզուներու թատերաբեմը եղած է.

Աշխարհահանդէսը բացուեցաւ ապրիլ 30-ին, շաբաթ օրը, ճիշդ կէսօրին, և պիտի տևէ մինչև դեկտեմբերի 1-ը. բացման գործողութիւնը բաւական հետաքրքիր և հիանալի էր. Աշխարհահանդէսի մայր դուռը, որուն մէջտեղը էլէքտրական թել մը կայ, որուն միւս ծայրը՝ կօճակով մը հաստատված Միացեալ-Նահանգաց մայրաքաղաքը, Ուաշինկթօն նախագահ Ռուզվէլթի պաշտօնասենեակը. Կէս օրէ, և նախագահը իր սենեակէն սեղմելով կօճակը բոպէական կը բացվի աշխարհահանդէսի դուռը, և բազմութիւնը «ուրաներով» ներս կը խուժէ.

—

Որպէս զի կարողանամ լաւ գաղափար մը տալ «Մշակի» ընթերցողներուն՝ անհրաժեշտ է, որ աշխարհահանդէսին նկարագրութիւն մը ընենք.

1904-ի Սէն-Լուի աշխարհահանդէսը բաւական պատկառելի ցուցահանդէս մըն է. Անոր համար չէ միայն, որ այնքան արժէքաւոր վայր մը ունի, անոր համար չէ, որ մինչև այժմ գոյութիւն ունեցած արուեստահանդէսներուն եռապատիկ, քառապատիկ ծախս եղած է, անոր համար չէ միայն, որովհետև գիտնական աշխարհի ամենէն վերջի հանճարին կատարելագործութիւնները հոս ցուցադրված են.

Այս աշխարհահանդէսի տարածութիւնն է 1,240 օրավար (acre). մէկ acre-ը հաւասար է 160 քառակուսի ոտքի. 1893-ին Կոլումբիայի արուեստահանդէսը, որ տեղի ունեցաւ Չիկագոյի մէջ, 633 օրավար տարածութիւնը ունեցեր է միայն. 1900-ին Պարիզի արուեստահանդէսը 336 օրավար էր. 1901-ին Պֆիլատէլֆիայի արուեստահանդէսը, ուր նախագահ Մէնքէնլի սպանվեցաւ 300 օրավար էր. Ֆիլատէլֆիայի դարագլխի արուեստահանդէսը 236 օրավար էր. Օմահայի (Միսիսիպի նահանգ) արուեստահանդէսը 150 օրավար տարածութիւն միայն ունէր. Ուրեմն, ըսել է, Պարիզինը չը հաշուելով, Սէն-Լուիի աշխարհահանդէսի տարածութիւնը գրեթէ կը հաւասարվի վերոյիշեալ չորս արուեստահանդէսներու տարածութեանը.

Սրա փղոսկրեայ սպիտակ պալատները աշխարհի պատմական բոլոր շէնքերը կը ներկայացնեն, այլ և այլ ցեղերու այս պալատները սակայն գործեր են Միացեալ-Նահանգաց առաջնակարգ ճարտարապետներուն.

Այստեղ են Հռոմի և Յունաստանի XV-րդ XVI-րդ դարերի հոյակապ շէնքերը, ճարտարապետութեան ամենէն կատարելագործեալը, այստեղ են նաև եգիպտական բուրքերը, և կամաւոր գմբէթները. Աշխարհահանդէսի կենտրոնական բաժինին մէջ 228 օրավար տեղ գրաւած են, հետևեալ քաղաքներու (կամ այն տեղերու, ուր արուեստահանդէսներ տեղի ունեցեր են) շէնքերը.

Այս վերջինս կը պարունակէ էլէքտրական ցուցադրութիւններ, Սէն-Լուիի քաղաքի էլէքտրական միլիոնաւոր ջահերով զարդարված յատակագիծը, էլէքտրական լուսավառ ծառը, որուն վրա կախված է թռչնակի բոյն մը, որ այս արհեստական թռչնիկը միշտ կը կանչէ այցելուներին այսպէս, «հըլլօ հըլլօ», (բարև) կայ նաև էլէքտրական լիճ մը, որուն վրա հաղարաւոր մակոյկներ, և մարդիկ այնպէս արագ կը մակոյկավարեն, որ ուղղակի ձիարշաւ խաղի տեսարան մը կը ներկայացնեն.

Առանց բացառութեան Ամերիկայի ամեն մի նահանգ իր յատուկ շէնքը ունի, ինչպէս աշխարհի բոլոր տէրութիւններ իրենց մասնաւոր ձևերով շէնքեր ունեն, որոնց թիւը 500-ի կը հասնի.

Ամերիկայի ամեն մի նահանգ իր ակուբասրահը ունի, ինչպէս արտասահմանեան բոլոր ժողովուրդներ իրենց յուղակները ունեն. Տասն և հինգ արհեստական գմբեթաձև շէնքերը ուշադրութեան արժանի են. Էլէքտրական բաժնի շէնքի ծախսն է 399,940 դոլար, (մէկ դոլարը հաւասար է 2 ռուբլու) 750 ոտք երկայնութիւն է, իսկ 525 ոտք լայնութիւնը, տարածութեան վրա հիմնված է.

Աշխարհահանդէսի բոլոր ծախսը եղած է 50 միլիոն, որուն 15 միլիոնը Սէն-Լուիի կառավարութիւնը և ժողովուրդը վճարեր է, իսկ 35 միլիոնը բաժանորդագրութեամբ հաւաքված է.

Նշանաւոր շէնքերէն մէկը թանգարանն է, (Flace of art), որին տարածութիւնն է—750 ոտք երկարութիւն, 525 ոտք լայնութիւն, ծախս եղած է 475,000 ֆունտ. Մետաղի հանքարանութեան շէնքի տարածութիւն է 750 ոտք երկարութիւն, 525 ոտք լայնութիւն, ծախս եղած է 498,000 ֆունտ.

Զանազան հնարագիտութեանց, շէնքի տարածութիւնն է 1200 ոտք, երկարութիւնը 525 ոտք, լայնութեան ծախս եղած է 620,000 ֆ. Transportation շէնքի տարածութիւնն է. 1300 ոտք երկարութիւն, 525 ոտք լայնութիւն. ծախս եղած է 696,000 ֆ.: Համալսարանական շէնքի տարածութիւնն է 750 ոտք երկարութիւն, 525 ոտք լայնութիւն. ծախս եղած է 400,000 ֆ.: Ստեղծագործութիւն, «Greation on pike» շէնքը ասինք սքանչելի է, ասոնց վրա քիչ մը խօսենք.

Ամենից առաջ հետաքրքիր է աշխարհահանդէսի էլէկտրական բաժինը. Գիտական աշխարհի բոլոր ներկայացուցիչները այստեղ են. Գիտութեան ամենավերջին կատարելագործությունները էլ ինքն ըստ ինքեան իրագործէր կեանքի մէջ կամ իբրև օրինական բացառութիւն և կամ այլապէս իբրև գայթակղութիւն.

Հասարակական մեծ աղէտների ժամանակ ժողովրդի իշխանաւորները շատ պէտք է զգոյշ լինեն։ Նրանց ամեն մի սխալ քայլը կարող է կամ յուսահատեցնել տգէտ ամբոխին, կամ խրախուսել նրան։

Պարսիկ իշխանաւորներն այդպէս չեն հասկացել իրանց պարտականութիւնները։ Հէնց որ խօլերան երևում է Ռաշտում, Գիլանի նահանգապետը՝ շահի որդին—Իզզուս-Սուլթանը, իր մտերիմների հետ միասին, մօտ 40 հոգի, բոլորն էլ բարձր պաշտօնեաներ, բալեհաճեցին թողնել Ռաշտը և հեռանալ Կարկանրուդ։ Իզզուս-Սուլթանն իր պաշտօնը ժամանակաւորապէս յանձնել է Միրզա-Նուրուլլա խանին, իսկ քաղաքի սանիտարական դրութեան վերահսկողութիւնը յանձնել է Լիվաուլ-Մուլքին։

Այդպիսի փոքրոգի վարմունքը չէ կարող չազդել տեղական ամբոխի վրա։

Միւս կողմից դա պարզ նշան է, որ ժամեղական ֆատալիզմը կամաց-կամաց սկսում է խախտվել։ Ֆ.

ՄԱԿԵՐՆԻՈՑԹԱԲԱՐ ՄԻ ՆԱՅԷՔ

I

«Մշակի» № 136 Շուշիի Թղթակից պ. Կովկասեանը, խօսելով տեղական դպրոցների ընթաց-աւարտների մասին, քաղաքային դպրոցի վերաբերմամբ ասում է հետեւեալը. «Ահա ձեզ մի դպրոց, որը իր ծրագրով ոչինչ չէ տալիս աշակերտներին և աւարտելով խեղճերը ոչինչ հարկաւոր չեն լինում, բացի հասարակ գրագիր, գործակատար, մանրավաճառ ու նոյն իսկ մսավաճառ լինելուց»։ Պարզ է, որ Թղթակիցը հիմնովին, բազմակողմանի ծանօթութիւն չունի քաղաքային դպրոցների ծրագիրների հետ ու ևս առաւել այն նպատակների, որոնց կոչված են ծառայելու այդ դպրոցները։ Քաղաքային դպրոցներ այժմ գոյութիւն ունեն գլխաւորապէս չորսդասեան ու վեցդասեան տիպի. առաջինը իր ծրագրով հաւասար է համարեա պրոգիմնազիային (առանց հին ու նոր լեզուների). իսկ երկրորդը հինգդասեան գիմնազիային, մի քանի առարկաներից նոյն իսկ վեցդասեանին (ֆիզիկա, բնական գիտութիւններ, պատմութիւն ու աշխարհագրութիւն)։ Կան քաղաքային դպրոցներ (ինչպէս Գանձակինը), ուր դասախօսվում են ցանկացողների համար նաև նոր լեզուները, ֆրանսերէնը ու գերմաներէնը, ուր սովորեցնում են նաև արհեստներ ու հաշուապահութիւն։ Քաղաքային դպրոցը պաշտօնապէս թէև համարվում է ստորնակարգ դպրոց, բայց իսկապէս նա ժողովրդական միջնակարգ դպրոցի դեր է խաղում։ Քաղաքային սկզբնական-տարրական (начальное училище) ու գիւղական ուսումնարանի համար քաղաքային չորս ու վեց դասեան դպրոցը մաս չէլի միջնակարգ ուսումնարան է, որը իր սաներին, մեծ մասամբ ժողովրդի հասարակ խաւերից, չունևոր շրջաններից, քաղաքային տարրական ու գիւղական դպրոցներից ժողովված, տալիս է բաւարար ընդհանուր կրթութիւն, պատրաստում է նրանցից լաւ, գրագէտ, բանիմաց, իր շրջանի համար ինտելիգենտ գործակատարներ, գրագիրներ, մանրավաճառներ, արհեստաւորներ, բանւորներ ու նոյն իսկ մսավաճառներ։

Պ. Կովկասեանն ասում է, քաղաքային դպրոցն աւարտողները ոչնչի հարկաւոր չեն լինում և մի և նոյն ժամանակ ասում է նաև, որ նրանք կարող են լինել հասարակ գրագիր, գործակատար, մանրավաճառ ու նոյն իսկ մսավաճառ. ուրեմն այս կարգի մարդիկ ոչինչ են պարոնի կարծիքով, ուսման, կրթութեան ոչ արժանի պարիսներ են, որոնք պէտք է խարխափեն միշտ խաւարի ճանկերում. ճորտատէրի, մէլիքի, բէգի հայեացք է ուղղակի։ Պէտք է իմանալ լաւ, որ ժողովրդական մասսաները կազմված են այդ ու աւելի չունևորներից, կամ, ինչպէս ընդունված է ասել, աւելի ստոր կարգի մարդկանցից։ Քաղաքային դպրոցները, ինչպէս նաև ուրիշ տիպի ու կարգի բոլոր ժողովրդական դպրոցները, գոյութիւն ունեն այդ մասսաների համար, և ժողովրդական մասսաներին նրանք մեծ օգուտ են տալիս, ափսոս միայն, որ թւով շատ քիչ են մեր երկրում։ Մի թէ ամօթ, խայտառակ բան է, եթէ մեր գործակատարը, մանրավաճառը, սափրիչը, կօշկակարը, դերձակը, մսավաճառը, կառապանը, հիւսը, գիւղացի ու քաղաքացի հասարակ բանւորը, մշակը, իր ծոցում ունենայ քաղաքային դպրոցի աւարտման վկայական, եթէ այդչափ գոնէ նա կրթութիւն ունենայ։ Չէ որ իդեալական դրութիւն պէտք է համարել այն, եթէ մեր կեանքում սովորական երևոյթ լինի այդ, եթէ մեր ամբոխի մարդիկ, մեր արհեստաւորը, բանւորը, մեր առաղձագործն ու մրգավաճառը առնուազը քաղաքային դպրոցի կրթութիւն ունենան, իսկ եթէ աւելին կարողանան ձեռք բերել ու ճան դարձեալ իրանց միջավայրում, պարապեն իրանց պրոֆէսիաներով, այդ աւելի լաւ բան կը լինի, աւելի ցանկալի ու համակրելի հասարակական առաջադիմութեան տեսակէտից...

Քաղաքային դպրոցներն աւարտողները հնարաւորութիւն ունեն իրանց կրթութիւնը շարունակել միջնակարգ ու այնուհետև բարձրագոյն դպրոցներում։ Քաղաքային դպրոցից միջնակարգ դպրոցը մտնելու համար այժմ, յունարէնը ոչ պարտադիր դարձնելուց ու լատիներէնի ծրագիրը կրճատելուց յետոյ, շատ աննշան նախապատրաստութիւն է պահանջվում ցանկացողներից (նոր լեզուներից ու լատիներէնից միայն), եթէ քաղաքայինում սովորել են նոր լեզուները, այն ժամանակ ոչ մի նախապատրաստութիւն համարեա հարկաւոր չէ (եթէ չը հաշուենք լատիներէնը), մանաւանդ բէալական դպրոցները մտնողների համար։ Քաղաքային դպրոցը լաւ աւարտած աշակերտը հեշտութեամբ մտնում է միջնակարգ դպրոցի 4-ը, 5-ը դասատունը։ Մտնում են բացառապէս նրանք միմիայն, որոնք նիւթական միջոցներ ունեն շարունակելու իրանց ուսումը մինչև վերջը, մինչև բարձրագոյն դպրոցն աւարտելը, մնացածները, որոնք կազմում են քաղաքային դպրոցների սաների առնուազն 80%, զուրկ լինելով իրանց կրթութիւնը շարունակելու նիւթական միջոցներից, լինելով քաղաքների ու գիւղերի չքաւոր, չունևոր խաւերից, բաւականանում են նրանով, ինչ որ ստանում են քաղաքային դպրոցից, ու դառնում են գործակատար, մանրավաճառ, գրագիր, արհեստաւոր, գիւղում ապրող գիւղատնտես, գիւղական մշակ, ու այդպիսով քիչ-շատ կրթված տարր է մտնում ժողովրդի ստորին խաւերը, այն դասակարգի մարդկանց խաւերը, որոնց մասին մի տեսակ արհամարհանքով է խօսում պ. Կովկասեանը. այդ տպաւորութիւնն է ստացվում նրա յօդուածի մեզ հետաքրքրող կէտից։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԱՍԵԱՌԱԴԻՑ

Օգոստոսի 19-ին

Ինչպէս ձեզ յայտնի է, Մերվում երևաց խօլերա հիւանդութիւնը և նրան զոհ գնաց հէնց առաջինը բժիշկ Ալմաղովը։

Մի քան, որ իսկապէս մինչև այժմ կասկածելի է թւում, այդ այն է, որ երևան եկած այդ հիւանդութիւնը, եթէ կարելի է միայն այսպէս անուանել, խօլերայի մի այլ տեսակն է, դեռ չեմ խօսում այն մասին, թէ նա իսկապէս խօլերա է, թէ միայլ հիւանդութիւն։ Բժիշկները ասում են թէ «նա տեղական բնաւորութիւն ունի» իսկ թէ ինչ է նշանակում «տեղական բնաւորութիւն ունի» նախադասութեան իմաստը, գոնէ մեզ համար այնքան էլ պարզ չէ և այն հանգամանքը, որ Մերվում կլիման և ջուրը առողջապահական տեսակէտից շատ ստոր են համարվում, որտեղ ագգաբնակութեան մինչև 10 տոկոսը տենդ հիւանդութիւնից տարվայ ամբողջ ժամանակը վարակված է լինում, աւելի քան հաւանական է թւում, որ երևի մի այդպիսի ժամանակամիջոցում, երբ մարդկանց երևակայութիւնից չէ հեռանում խօլերայի սարսափելի անունը, ասում եմ գուցէ սովորական հիւանդութիւնների հետևանք լինի։

Մանաւանդ վերջին ժամանակներս տիֆ հիւանդութիւնը Ասխաբադում զինուորների մէջ սաստիկ տարածված էր և բաւականաչափ զոհեր տարաւ. խօսում էին, որ նա տարածվել է նաև Մերվում և այժմ, երբ ասում են, թէ այնտեղ խօլերա կայ և նա գլխաւորապէս տարածված է զինուորների մէջ, իսկ քաղաքացիներին այնքան էլ վնաս չէ տալիս և այս բոլորի վրա եթէ աւելացնենք բժիշկների կարծիքը, թէ նա տեղային բնաւորութիւն ունի, այն ժամանակ եզրակացութիւնը հաւանական է թւում, որ նա կամ մի այլ հիւանդութիւն է, կամ խօլերայի մի տեսակն է։

Օգոստոսի 8-ից մինչև 18-ը Մերվում հիւանդացել են մօտ 60 հոգի, իսկ մեռնողների թիւը եղել է 12, որից միայն երկու հոգի տեղացիներից, իսկ մնացածները եղել են զինուորներ և մի այնպիսի քաղաքում, ինչպիսին Մերվն է, որտեղ տիրապետող ազգաբնակութեան մեծ տոկոսը կազմում են թիւրքմէնները և սաթերը, որոնք իրանց կեղտոտ և անմաքուր կենցաղավարութեամբ աւելի ստոր են կանգնած, քան նոյն իսկ պարսիկները Խորասանի խորքերում, հաւանական էր թւում, որ խօլերան նրանց մէջ մեծ կոտորած առաջ կը բերէր, բայց իրողութիւնն բոլորովին հակառակն է ապացուցանում. այն ժամանակ, երբ զինուորները, որոնց առողջապահութեան համար աւելի մեծ խմամք ու հոգ է տարվում, ընդհակառակը նրանցից աւելի է զոհեր տանում։

Այստեղ, մեզ մօտ օգոստոսի 16-ին հիւանդութեան երկու դէպք պատահեց. հիւանդներին անմիջապէս տարան հիւանդանոց. միւս օրը երկուսն էլ վախճանվեցին. վերագրում էին խօլերային, սակայն անդամալուծելուց յետոյ ապացուցվեց, որ նրանք պարսիկ լինելով մեծ քանակութեամբ օպիում ուտելուց թուլացել և հիւանդացել էին։

Թէոդ. Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձրագոյն մանիֆէստի հիման վրա Գանձակի բանդից արձակել են 19 բանտարկեալներ—17-ը տղամարդ, 2-ը կին։

Անդրկովկասի երկաթուղիների վարչութիւնը անհրաժեշտ է համարել առաջիկայ 1905 թ-ին մտցնել երկաթուղիների գնացքների վրա, բացի սովորական կօնդուկտօրներից, նաև ֆելդշեր-կօնդուկտօրներ՝ գնացքների մէջ պատահած հիւանդներին շուտափոյթ օգնութիւն հասցնելու համար։ Բացի դրանից, լինելու են և տելեգրաֆիստ կօնդուկտօրներ։

Պետերբուրգի կայսերական համալսարանը մտնելու համար այս տարի 800 մարդու տեղ կայ բոլոր ֆակուլտէտներում։ Այդ համալսարանը մտնելու համար 125 հոգի հրէաներ խնդիր են ներկայացրել, որոնցից 31 գիմնազիան աւարտել են մէդալով։ Դրանցից օրէնքով կընդունվեն միայն 25 հոգի։

Այս տարվայ յուլիս ամսի 24-ին Շորագեալի գիւղամասի շրջանում (Կարսի նահանգ) մի ոստիկանական պահապան (ստրաժնիկ) անհետ կորել է իր ձիով ու զէնքերով. նա վերադառնալիս է եղել պաշտօնական շրջագայութիւնից դէպի շրջանի կենտրոնատեղին։ Այս տարվայ ապրիլին էլ նոյն գիւղաշրջանի տասմանների անհետ կորել է երկու մի ոստիկանական պահապան իր ձիով ու զէնքերով. նրա անունն էր Բեղնիչենկո։ Ոստիկանութեան բոլոր խուզարկութիւնները նրան գտնելու համար զուր անցան։

Մայրաքաղաքի լրագիրները լսել են, որ մի քանի քաղաքների վարչութիւնները հաց են յարուցել ներքին գործերի մինիստրութեան մէջ, թոյլտուութիւն խնդրելով հիմնել մի հասարակական քաղաքային ընդհանուր գանձարան, որից գանձան քաղաքները ինքնավարութիւններ-կարող լինեն փոխառութիւն ստանալ իրանց քաղաքները բարելաւելու համար։ Այդ ընդհանուր գանձարանից ստացված պարտքն իր տոկոսներով պէտք է վերադարձնեն փոխ առնողները։

Մեզ խնդրում են տպագրել. «Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու նոր երէցփոխ պ. Բաբեան սկսել է եռանդով գործել։ Նա երկու ամսվայ ընթացքում արել է հետևեալ բաները. 1) հոգացել է Երգեցիկ թիմի մասին և կազմել է տուել քառաձայն երկսեռ խումբ, որ երգում է կիրակի օրերը։ 2) գանձանակ շրջել սահմանափակել է և միայն եկեղեցու անունով է շրջեցնվում այժմ. տիրացուները և քահանաները դրա փոխարէն ստանում են ամսական նպաստներ։ Իսկ անհրաժեշտ նորոգութիւնների համար կազմված են չորս հաշտարարներ հետ նախապէս խորհրդակցելուց յետոյ։ Ծախուց նախահաշիւներ։ 1) եկեղեցու ներսի պատերի նորոգութիւնների և առհասարակ քանդվածների համար որոշված է 3060 բուբլի 2) եկեղեցու բակի մէջի աւազանի նորոգութեան համար 942 բուբլի. 3) զանգակատան դրսի չորս կողմից Քութայիսի քարով շրջապատելու և նորոգելու համար 4047 բուբլի, 4) եկեղեցու բակի շրջապատը Ալգէթի քարով շինելու և վանգակապատելու համար 7339 և 5) եկեղեցու գաւիթը ջուր բերելու և նրա համար աւազան շինելու համար 700 բուբլի։ Այս նորոգութիւնների ծախուց հաշիւները կազմել է Թիֆլիսում արդէն յայտնի քանդակագործ Ա. Անդրիօլէտին։ Պ. Բաբեանը մեծ յոյս ունի, որ Թիֆլիսի մեր հարուստները և Վանքի ծխականները կաջակցեն և նիւթապէս կօգնեն կատար ածելու այս նորոգութիւնները։

«Закасп. Об.» լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրի կարգադրութեան համաձայն, պետական բանկն այս օրերս այդ լրագրի խմբագիր-հրատարակիչ Կ. Մ. Ֆէօդորովին տուել է 20,000 բուբլի օժանդակութիւն, որպէս զի դրանով նա ընդարձակէ իր հրատարակչական գործը։

ՍՕՉԻՑ մեզ գրում են. «Ահա չորրորդ ամիսն է, որ երաշտ է։ Այդքան երկար ժամանակամիջոցում հազիւ թէ մի քանի անգամ տեղի են ունեցել չնչին, անբաւարար անձրևներ, որոնք ոչ մի բաւականութիւն չեն տուել վերջին ծայր ծարաւի և պապակած արտերին։ Այսուհետև եթէ անձրևներ ևս տեղի ունենան, այս տարվայ ցանքսերի նկատմամբ, նրանց տուած օգուտը շատ չնչին կը լինի։ Այսքան երկարատև և աղէտաւոր երաշտ մեր կողմերում երբէք տեսնված չէր։ Գիւղական ժողովուրդը, որը առատութեան տարիներում իր տնտեսական գործերի մէջ հազիւ կարողանում էր ծայրը ծայրին հասցնել, վերջնական յուսահատութեան մատնված, ապշած մնացել է չը գիտենալով, թէ ինչ պէտք է անէ, ինչ միջոցի պէտք է դիմէ մօտալուտ վտանգի դէմ մաքառելու համար։ Նա հարկադրված, ակամայ չնչին գներով պէտք է վաճառէ իր տընտեսութեան համար անհրաժեշտ կենդանիները, նախ այն պատճառով, որ ամառվայ ընթացքում ոչինչ կեր չէ կարողացել պատրաստել նրանց համար, և երկրորդ՝ ընտանիքը ձմեռվայ արհաւիրքներից պատսպարելու, կերակրելու համար փող է հարկաւոր. սակայն այդ, մանաւանդ ներկայ երերուն վիճակում շատ անգոհացուցիչ միջոց է, ընտանեկան քաղմաթիւ կարիքների դիմաց։ Եւ ահա ժողովրդի, մանաւանդ աղքատ դասակարգի առջև կանգնում է պարտքի սոսկալի ուրուականը, որից նա այնքան տանջվել է ժամիկ անցեալում։ Այսպիսի նեղ պայմաններում, իմ հաստատ կարծիքով ամենայարմարը այն կը լինէր, որ ժողովրդի միջից նիւթապէս կարող անձինք միանան, և ուրիշ տեղերից, ուր այս տարի բերքը առատ է գնեն, ի հարկէ, դրդված ոչ լոկ շահադիտական զգացմունքից, այլ առաւել կարեկցութեան և ողորմածասիրութեան զգացմունքից, հացահատիկ, անասունների համար ճարակ և այլ կենսական միջոցներ ու ձեռնտու պայմաններով և մատչելի գներով բաժանեն իրանց հայրենակիցներին. այսպիսով ընդհանրութիւնը ազատված կը լինի մի շարք աւելորդ պարտքերից և իրանք ևս թէ մարդասիրական մի գործ կատարած կը լինեն և թէ որոշ չափով նիւթապէս օգտված»։

ԿՈՂԲԻՑ մեզ գրում. «Երկու տարի սրանից առաջ մի խումբ երիտասարդներ մեծ ջանք գործ դնելով աշխատեցին հասկացնել տեղիս ժողովրդին սեփական բժիշկ ունենալու անհրաժեշտ պահանջը։ Սկզբում ժողովուրդը շատ ծուռը աչքով էր նայում այդ հարցին և դրա պատճառը պէտք է ընդունել պառաւ կանանց հեքիմներին, դալլաքներին, գրբաց և տիրացուներին։ Այդպիսով 4000 ընակիչ ունեցող Կողբ գիւղը չը կարողացաւ իր սեփական միջոցներով մի բժիշկ հրաւիրել։ Շատ բնական է, որ նրանք, ովքեր ունեն սեփական միջոց, երբեմն կարողանում են մի որ և է քաղաքից բժիշկ հրաւիրել և կամ հիւանդին տեղափոխել իրանց ցանկացած տեղերը. իսկ միջոցից զուրկ մարդիկ դիմում են իրանց հեքիմներին և կամ մնում են Աստծոյ խնամքին յանձնված։ Եւ հէնց այդ է պատճառը, որ մի չնչին հիւանդութիւն ունեցողն անգամ դոհ է գնում անմիտ տգէտ հեքիմներին։ Իւրաքանչիւր տարի քանի քանի անմեղ զոհեր խլում է մեզանից անգութ մահը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊԱՏԻՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Լեռօեանի կռիւների մասին։ Բէյտէրի գործակալութիւնը զետեղել է անգլիական բոլոր լրագիրների մէջ մի շարք հեռագրական տեղեկութիւններ Լեռօեանի մօտ տեղի ունեցած վերջին օրերի անցքերի մասին։ Գործակալութեան Թղթակցի խօսքով, Անշանչժուանից դէպի Լեռօեան նահանջելու հրամանը արձակվեց, ի նկատի ունենալով այն լուրջ դրութիւնը, որի մէջ գտնվում էր 10-րդ կօրպուսը, որը կորցրել էր կռւի մէջ իր օֆիցէրների մեծ մասը։ Ռուսաց զօրքերը դանդաղօրէն և հան-

դարտ նահանջում էին սաստիկ անձրևի տակ։ Թշնամու կրակի տակ նրանք ստիպված էին անցնել մի նեղ լեռնանցք, որպէս զի մտնեն հովիտը և ռուսաց զօրքերը կատարեցին այդ անցումը հաւասարաբար աննշան կորուստներով, չնորհիւ այն հանգամանքի, որ եապօնացիները սաստիկ յոգնած էին նախորդ երեքօրեայ կռիւներից և անկարող էին նահանջողներին հալածել։ Երկու բանակները, որոնցից եապօնականը թւով գերազանցում է ռուսականից, կանգնած են Լեաօեանի մօտ, միմեանց դէմ յանդիման։ Փոքր տարածութեան վրա համախմբված երկու բանակների քանակութիւնը հաշվում են 400—500 հազար մարդ։ Ռուսաց զօրքերի հրամանատարը լի է յոյսերով և յաճախ կատակներ է անում օֆիցէրների հետ։ Նոգղու և Օկու գեներալների հարաւային և հարաւ-արևելեան բանակների թիւը ու դասաւորութիւնը լաւ յայտնի են ռուսներին։ Լեաօեանից տեղեկութիւն է ստացվել, որ ռուսներին աջողվել է բոլորովին ապահովել իրանց տրանսպորտների և արտիլէրիայի անվտանգութիւնը, չը նայելով, որ եապօնացիները վերջին 4 օրվայ ընթացքում սաստիկ եռանդով և արագ էին արշաւում, թէև կրելով ծանր կորուստներ։ Ռէյտէրի գործակալութեան թղթակիցը ասում է, որ տրանսպորտների և ռուսական երեք կորպուսների հովտի մէջ շարժողութեան պատկերը չքնաղ էր։ Ռուսաց արտիլէրիան ճնացել էր իր դիրքի վրա և սպանիչ կրակով յետ էր պահում եապօնացիների յուսահատ առաջ խաղացութիւնը։ Ռուսական արտիլերիայի կորուստները այդ ժամանակ աննշան էին։ Հաղորդակցութիւնը Մուկդէնի հետ բոլորովին ազատ է։ Տասիատօնտուօից գործակալութիւնը ստացել է հետևեալ լուրը. այդ կէտը, որի մասին խօսում ենք, գտնվում է Լեաօեանից 17 վերստ դէպի արևելք, այն տեղում, ուր Տանխէի վտակը թափվում է Տայձզիխէի մէջ։ Ռուսաց ամբողջ բանակը, որը գտնվում էր այստեղ Անպինից տանող ճանապարհի վրայունիսի 18-ից սկսած, սկսեց իջնել օգոստոսի 13-ին սարերից հովիտը, որ տարածվում էր դէպի Լեաօեանը 16 վերստ տարածութեան վրա։ Ռուսները ստիպված էին նահանջել անընդհատ կռիւ մղելով, սակայն նրանք կարողացան վերցնել իրանց հետ իրանց վիրաւորներին և ճանապարհին թաղել սպանվածներին։ Նրանք կորցրին այդ շարժման մէջ 6 թնդանօթ, բայց շատ եապօնացիներ դերի վերցրին։ (Б. Вѣд.)

—«Русскій Инв.» գրում է. «Եապօնական զօրքերի հրամանատարութիւնը ստանձնած մարշալ Օյեամայի մտածած գործողութիւնը՝ վճռական յարձակումն գործել մանջուրական բանակի դէմ, որ սկսվեց օգոստոսի 11-ին, ըստ երևոյթին, մտնում է նոր ֆազիսի մէջ։ Առ այժմ նկատենք որ մեր հակառակորդը գրեթէ արդէն բաց է թողել յարմար բոպէն, երբ այդպիսի գործողութիւնը կարող էր իրական նշանակութիւն ունենալ. իսկ այժմ մեր մանջուրական բանակը, մաքրելով նոյն իսկ այն առաջաւոր դիրքերը, որոնք փառաւոր կերպով կատարեցին իրանց դերը օգոստոսի 17-ի և 18-ի կռիւների մէջ, անշուշտ կը գտնի բաւական միջոցներ՝ հակառակորդի ծրագրած հարուածները յետ տալու համար։

—Լօնդօնից հեռագրում են օգոստոսի 20-ին «Б. Вѣд.» «Տօկիօից հեռագրում են, որ օգոստոսի 19-ին, առաւօտեան, եապօնական բանակի ձախ թևը եռանդուն արշաւումն սկսեց ռուսաց արևելեան ճակատի դէմ։ Կուրօկիի բանակը բաժանված է մասերի և այդ պատճառով ռուսներին վտանգ էր սպառնում շրջապատված լինել։ Սակայն Կուրօպատկինը ժամանակին նկատեց սպառնացող վտանգը և սկսեց նահանջումը։

—Բերլինից հեռագրում են «Рус. Вѣд.» լրագրին օգոստոսի 20-ին. «Այն ժամանակ, երբ պատերազմական քննադատներից շատերը կարծում են, որ Լեաօեանի ճակատամարտի ելքը երկար ժամանակով կը վճռի պատերազմի բախտը, Frankf. Zeitung» լրագրի քննադատը այդպիսի կարծիքը չափազանցրած է գտնում։ Եթէ ռուսները այս անգամ յաղթվեն, նրանք, անկասկած, Թարմ զօրքերով կսկսեն կռիւը Լեաօեանից հարաւում։ Սեդանի նման կապիտուլացիա (անձնատուր լինել) չէ կարող լինել, որովհետև զանազանութիւնը զօրքերի քանակութեան մէջ այնքան մեծ չէ, ինչպէս այդ էր յիշեալ Ֆրանսիական կռիւ ժամանակ։ «Vossische Zeitung» ցոյց է տալիս, որ զինուորների և թնդանօթների թիւը Լեաօեանի կռիւում մօտաւորապէս հաւասար է միայն կենիգրեցի մօտ կռուողների թիւին և ազգերի՝ Նապոլէօնի հետ Լայպցիգի մօտ ունեցած կռիւի ժամանակի թիւին, մինչ Սեդանում կռուողների թիւը միայն 244 հազար էր։ Ինչ վերաբերում է զոհերի թիւին, Սեդանում սպանվածների և վիրաւորների թիւը 25,000 էր, Կենիգրեցում—33,000, իսկ Լեաօեանի կռւում անշուշտ, երկու կողմերից ևս կորուստները աւելի մեծ պէտք է լինեն։ Մասնաւոր հեռագիրների համաձայն, չորեքշաբթի օրը արտիլէրիական կրակը առաւօտեան ժամը 10-ին մօտերը այնքան սաստկացաւ, որ ամեն բան ցնցվում էր իբրև երկրաշարժից։ Երբեմն դժուար էր իւրայինները ջոկել թշնամիներից—այնքան մօտեցել էին թշնամի կողմերը։ Մի քանի ռուս թղթակիցներ ևս վիրաւորվեցին, նրանց թւում և «Русь» լրագրի թղթակիցը՝ ծանր կերպով։

—«Berliner Tageblatt» լրագիրը տպել է մի գերմանական բարձրաստիճան գեներալի նամակը Լեաօեանում սկսված վճռական կռիւ մասին։ Մի կողմից, ասում է նա, 190,000 ռուսներ, որոնք գրաւում են ուժեղ դիրքեր Լեաօեանի շուրջը մօտ 30—50 վերստ տարածութեան վրա, միւս կողմից—240,000 եապօնացիներ, որոնք շրջապատում են ռուսաց դիրքերը և արևելքից, և հարաւից և հարաւ-արևմուտքից։ Հէնց այդ հակադրութիւնը ինքն ըստ ինքեան նշանաւոր է։ Ռուսական 130 միլիոն մեծ ազգի զաւակները վճռական կռիւի մէջ փոքրամասնութիւն են կազմում եապօնացիների դէմ, որոնց թիւը 48 միլիոն ևս չը կայ։ Վաղուց իրանց խիզախութեամբ յայտնի ռուսները, այնքան պատերազմներից յաղթական դուրս եկած, այսօր ստիպված են պաշտպանվել մի ժողովրդի դէմ, որի մասին 40 տարի առաջ ոչ ոք լրջօրէն չէր խօսում։ Յայտնի են այն պատճառները, որոնք դրեցին ռուսներին այդպիսի աննպաստ պայմանների մէջ. այժմ խնդիրը նրա մէջ է, կաջողվի՞ ռուսներին մի հարուածով յետ բերել բոլոր անաջողութիւնները և ծածկել առաջ կատարված բոլոր թերութիւնները ու սխալները։ Կարելի է հաւատի լինել, որ ռուսական զօրքը մինչև վերջը կը կռւէ իր սովորական փառաւոր քաջութեամբ։ Բայց գործը կարող չէ յօգուտ ռուսների վճռվել քանի որ եապօնացիները, առաջվայ պէս, վայելեն մանեւրների կատարեալ ազատութիւնը և նախաձեռնող լինեն։ Միայն ռուսների վճռական հարուածը որոշ բոպէում և որոշ կէտում կարող է փշրել եապօնական զօրքը և վերջ դնել այս տարվայ պատերազմին։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, օգոստոսի 11-ին

Սալմաստեցու ցաւերն այս տարի բազմազան եղան. մէկ կողմից պարսկա-քիւրդական կռիւը, միւս կողմից ծաղիկ հիւանդութիւնը և թրթուրն ու մորեխը, աւելացրէք դրանց հետ նաև խօլերայի սարսափը և պատկերը կատարեալ կը լինի։

Պարսկա-քիւրդական կռիւը դեռ չէ վերջացել. զօրքը բանակ դրած է Դիլմանի և Հաֆթվանի միջև ու սպասում է բարձրագոյն հրահանգների՝ ոչ պակաս քաջ հասցնելով գիւղից գիւղ գնացող միամիտ հայ ու ասորի անցորդներին, որոնք կողոպտվում են սպառնալիքների տակ, զրկվելով նոյն իսկ իրանց հանդերձներից ու կօշիկներից։ Զէֆֆէր աղան՝ քիւրդ ցեղապետը, որի համար պարսից զօրքը եկած է Սալմաստ նրան բռնելու, փախած է իւրայիններով դէպի Թիւրքիա և զրոյց կայ, որպէս թէ մօտ օրերս պաշտօնապէս պիտի յանձնվի պարսից կառավարութեան, որի համար տեղական զօրքը պատրաստվում է մինչև սահմանագլուխ ընդ առաջ գնալու։ Բայց ով գիտէ, ճիշդ է։

Ծաղիկ հիւանդութիւնն էլ անխնայ և անխիղճ կոտորածներ է անում թէ փոքրերի և թէ մեծերի մէջ. այն երեխաները, որոնք բըժիշկների կողմից պատուաստված են, զերծ են մնում վարակումից, իսկ չը պատուաստվածները ահագին զոհեր տուին։

Պակաս վնասներ չը հասցրին թրթուրն ու մորեխը. բոլոր խնձորենիները ջնջված են թրթուրից, իսկ մորեխը կիրաւ դաշտի խոտը, որը զգալի կերպով թանգացաւ։ Օրինակ, անցեալ տարի 100 խուրձ խոտն արժէր 15 դրան, իսկ այս տարի բարձրացել է մինչև 24 դրան։ Դարմանի բեռը վեց ապասից բարձրացել է տասնումէկ ապասիի. ցորենի բեռը 35 դրանից 50-ի։ Այսպէս է, ներկայումս ամեն բանի թանգութիւն է։ Վայն եկել է այն ընտանիքին, որ իր յոյսը դրած է իր զարիպներից օգնութիւն ստանալու վրա ու չէ ստանում, և աւելի վայ նրանց, որոնք տոկոսի տոկոսներն հաշուելով էարձ ժամանակում 50-ը հարիւրի են հասնում, թումանին ամսական 5 շահիից մինչև 1 դրան% (պարսկական թումանը ներկայումս հաւասար է ռուսական 1 ռուբլի 70 կոպէկին)։

Այն ժամանակ, երբ լուր տարածվեց, թէ իբր Թավրիզում խօլերայով մեռնում են օրական 150 հոգի, մեծ վախ ընկաւ սալմասցիների և մանաւանդ Դիլմանի թուրքերի մէջ, բայց երբ հերքվեց, շատերը հանգստացան, ու հիմա էլ թէպէտ կան այնպիսիները, որոնք զգուշանում են կեղտոտութիւնից, ուտելիքից ու խմելիքից, սակայն կան և շատերը, որոնք կրկնում են հին երգը՝ թէ ինչ որ ճակատագիրն է՝ այն կը լինի, ու անհոգ, անտարբեր նստած են։

Փետրվարի 25-ին Խոյի և Սալմաստի մէջ ամերիկացի միսիոնար Էէրրի ու նրա ասորի ծառայի, նոյնպէս և Ուրմիում Ռաբի Մուշիի սպանութեան խնդիրը դեռ մնում է անվճռելի։ Սակայն անգլիական հիւպատոսը դեռ Ուրմիում լինելով՝ եռանդուն կերպով աշխատում է, ու երբ Թավրիզ վերադառնայ, յոյս կայ, որ չարագործներն իրանց արժանի պատիժը պիտի ընդունեն։

Մ. Ա. Փիրան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 օգոստոսի

ԿԻՍԼՕՎՈԴՍԿ։ Կիսլօվոդսկում խօլերայով հիւանդանալու եղած կասկածելի դէպքը բակտերիօլոգիական հետազօտութիւնից յետոյ խօլերա չը ճանաչվեց։

Կ. ՊՕԼԻՍ։ Օգոստոսի 22-ին։ Այստեղ եղած դեսպաններից մի քանիսը հեռագիր ստացան Հայաստանի Վան քաղաքից, որի մէջ հաղորդվում է, որ օգոստոսի 19-ին 150 հայ յեղափոխականներ ռուսաստանցի հայի հրամանատարութեամբ եկան Վան, որ անկարգութիւններ առաջացնեն այնտեղ սուլթանի գահակալութեան օրը։ Նրանք գրաւեցին քաղաքային թաղերից մէկը և կողոպտեցին այդ թաղը։ Իսկոյն դրանից յետոյ տաք կռիւ սկսվեց թիւրքաց զօրքերի հետ. 35 տներ մոխիր դարձան. երկու կողմերից սպանված են 41 մարդ։ 2000 քրիստոնեաներ, կոտորածից վախենալով, փախան վանքը։ Ապստամբները առանձին եռանդով հրացաններ էին պարպում թիւրքաց զօրքերի վրա այն տան առաջ, որը գտնվում էր անմիջական հարևանութեան մէջ ֆրանսիական հիւպատոսարանի հետ։ Դեռ ևս ուրիշ հեռագրական մանրամասնութիւններ չը կան։ Վանի անգլիական և ամերիկական հիւպատոսները, որոնք ճանապարհորդութիւններ էին կատարում իրանց շրջաններում, հրաման ստացան անյապաղ վերադառնալ Վան։ Այս առիթով Զինովիեվ երկու ժամ խօսակցութիւն ունեցաւ մեծ վիզիրի հետ։

Կ. ՊՕԼԻՍ, 20 օգոստոսի։ (Ուշացած է)։ Ռուսաց կառավարութիւնը ուժեղացրեց կովկասեան սահմանի պաշտպանութիւնը, որովհետև վերջին ժամանակներս հայկական հրամանատարներին միացել են շատ փախստականներ։ Լուրերի համեմատ, Ալէքսանդրօպոլում երևան է հանված, որ գաղտնի զէնք են անցկացնում հայկական կոմիտէների պէտքերի համար։ Ասում են, որ այդ նպատակի համար օգուտ էին քաղում թաղուաներից, որոնց ժամանակ զէնքը թաղցնում էին գերեզմաններում։

ՇԱՆԴՀԱՅ։ 24 օգոստոսի։ (Ռէյտէր)։ Շանդհայի մօտ գտնվող եապօնական էսկադրան բաղկացած 5 կրէյսէրներից և վեց հակառականաւերից, կը մնայ այնտեղ այնքան ժամանակ, մինչև որ «Ասկոլդ» չի դուրս գայ նաւաշինարանից և մինչև որ չեն վերցվի նրանից մեծ թնդանօթներ։

ՏՕԿԻՕ։ 24 օգոստոսի։ (Ռէյտէր)։ Հաղորդում են, որ ռուսները յետ քաշվեցին Եանտայից այն կողմը, որ յետոյ գրաւվեց գեներալ Կուրօկիի ձեռքով։ Պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, ռուսաց զօրքի մի մասը կը մնայ Ուլնշոյցզիում, Եանտայից դէպի հարաւ, ուր կենտրօնացած են ռուսական գլխաւոր ոյժերը։

ԵԱՆՏԱՅ։ 23 օգոստոսի։ (Ռէյտէր)։ Տաք կռիւ տեղի ունեցաւ Եանտայից դէպի հիւսիս-արևելք։ Եապօնացիները արշաւում են հիւսիսային ուղղութեամբ, այն լեռնաշղթայի երկարութեամբ, որ գտնվում է երկաթուղային ճանապարհի արևելակողմը։ Մի քանի ընդհարումներ տեղի ունեցան 20 մղոն հեռաւորութեամբ դէպի հարաւ-արևելք Մուկդէնից։ Ռուսների զօրաբաժինը ընում է Կուրօկիի ճանապարհը, պաշտպանելով լեռնանման զօրքերի գնալը դէպի հիւսիս։

ՉԻՖՈՒ, 23 օգոստոսի։ (Բերլինի վրայով)։ Եապօնական 14 գնդեր այս շաբաթ Տօկիօից կուղարկվեն լրացնելու համար միայն պաշարող զօրքի պակասորդը Պօրտ-Արտուրի մօտ, որը, հեղինակաւոր անձանց կարծիքով, կորցրել է 25,000 մարդ։ Վերոյիշեալ լրացուցիչ օգնական զօրքով եապօնացիները կունենան 45,000 մարդուց բաղկացած պաշարող զօրք։

Կ. ՊՕԼԻՍ, 24 օգոստոսի։ Լուրերի համեմատ, գործերի դրութիւնը վիլայէտում (?), վերջին օրերի ընթացքում հայկական հրամանատարների կատարած անկարգութիւնների պատճառով թէպէտ և երկիւղ է ներշնչում, սակայն, այնուամենայնիւ, ճշգրիտ աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ, չէ կարող վտանգաւոր համարվել։ Բիթլիսի վալիի զեկուցման համաձայն, այդ վիլայէտում այս օրերս տեղի ունեցաւ ընդհարում հայ հրամանատարների և զօրքերի միջև։

25 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրօպատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1904 թ. օգոստոսի 23-ին. «Ներկայ օգոստոսի 23-ին բանակը, աջողութեամբ շարժվելով դէպի հիւսիս, դուրս եկաւ վտանգաւոր դրութիւնից, որի մէջ գտնվում էր, թշնամու սպառնալիքի տակ, թէ ճակատի, թէ ձախ թևի կողմից, ունենալով նեղ ճակատամաս։ Ամբողջ օրը վերջապահ գնդերում և մանաւանդ ձախ թևի վրա, փոխադարձ հրաձգութիւն էր կատարվում, բայց աննշան։ Այս օրվայ ընթացքում մեր կորուստները հասնում են մինչև 100 հոգու։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան»։ — Գեներալ-լէյտէնանտ Լիաչունովի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով, 1904 թ. օգոստոսի 24-ին. Այսօր, օգոստոսի 24-ի առաւօտեան, Կօրսակօվեան պահակին մօտեցան թշնամու երկու պատերազմական նաւեր և ափից 7 վերստաչափ հեռաւորութեան վրա կանգ առան։ Ժամը 10 և 20 բոպէին թշնամու նաւերից մօտեցան ընկղմված «Նովիկ» կրէյսէրին երկու շոգեշարժ նաւակներ։ Մեր զօրքերն այդ նաւակների վրա կրակ բաց արին, որից յետոյ շոգեմակոյկները հեռացան գնացին իրանց նաւերի մօտ։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան»։

25 օգոստոսի

ՏՕԿԻՕ, 25 օգոստոսի։ (Ռէյտէր)։ Օյեամի հաշիւը ցոյց է տալիս, որ ռուսները դեռ գրաւած ունեն ածխային հանքերը Եանտայում։ Դրանք միակ ածխային հանքերն են հիւսիսային Մանջուրիայում և ահագին նշանակութիւն են ներկայացնում ռուսաց երկաթուղիների շահագործութեան համար։—Ռուսաց զօրախումբը գրաւել է Ինշունսուն, Եանտայից հարաւ։ Կուրօկիի աջ թևը նեղ շփման մէջ է ռուսների հետ։ Եապօնական ձախ և կենտրօնական բանակները կանգ են առել Տայցիխէի ձախ ափի վրա։ Օյեաման ենթադրում է ուղարկել զօրքի մի մասը հեռու դէպի հիւսիս՝ Մուշանը գրաւելու համար։ Երկաթուղու գծի երկարութեամբ գնալիս Կուրօպատկինը այրեց բոլոր երկաթուղային և ուրիշ կամուրջները Տայցիխէի վրա։ Հաշիւը ցոյց չէ տալիս վերցրած թնդանօթների թիւը։ Օյեաման հաստատում է, որ զօրքերի ոգին հիանալի է, չը նայելով տանջօրեայ անընդհատ կռիւներին, որոնք շատ զոհեր ունեցան։ Կուրօպատկինը աջակցութիւն ստացաւ մինչև օգոստոսի 17-ը. նրա տրամադրութեան ներքոյ 12 դիվիզիայից աւելի կար։ Կորուստները անյայտ են։ Ռուսները ցոյց տուին ամենայատուկ դիմադրութիւն Խէյեանտաից դէպի արևմուտք բարձունքների վրա։ Գեներալին աջողվեց միայն չորսօրեայ անընդհատ և յամառ կռիւից յետոյ գրաւել ռուսաց դիրքերը։

ԼՕՆԴՕՆ, 25 օգոստոսի։ (Ռէյտէր)։ Կարդիֆում սենսացիօն լուր է պտտում, որ կառավարութիւնը արգելեց գերմանական շոգենաւ «Հանս Վենցելին», որ վերցրել էր 4000 տօնն ամենալաւ վալլիական ածուխ, այլ ևս ածուխ բեռնելը։ Կասկածում էին, որ ածուխը սահմանված էր ռուսաց կրէյսէրների համար բաց ծովի վրա։ Իշխանութիւնների այդպիսի միջոցները Կարդիֆում սակայն վճռապէս հերքվում են։—Կուրօպատկինի նահանջումը յայտնի տեղ կը գրաւէ զինուորական պատմութեան մէջ, որովհետև կատարվեց նշանաւոր

հմտութեամբ։ Զինուորական տարեգրութիւնների մէջ քիչ փաստեր կան ռուսաց գլխաւոր հրամանատարի այդ եռանդի և վճռականութեան նման։ Հետևանքը ահագին ազդեցութիւն կունենայ պատերազմի ապագայի վրա։

ՆԻՒ-ՅՈՐՔ, օգոստոսի 24-ին։ (Ռէյտէր)։ Ռուսները նահանջում են նախամեծարապէս դէպի Տելին, մի կողմ թողնելով Մուկդէն։

ՉԻՖՈՒ, 20 օգոստոսի։ (Ռէյտէր)։ 10,000 եապոնական հիւանդներ և վիրաւորներ ներկայումս գտնվում են Դալնիում։ Կէսից աւելին տանջվում են բերիբերիից, որը արագութեամբ զոհեր է տանում։ Ռուսները Պորտ-Արտուրում առատ պաշարներ ունեն։ Երեկոյեան Պորտ-Արտուրում լսվում է թնդանոթաձգութիւն։ Քաղաքը ռմբակոծութեան ենթարկվեց օգոստոսի 20-ին և 21-ին։ Երկու թնդանոթներ մարտկոցում էրլունշանի մօտ տեղահան են արված։—Ալիւրի գինը Պորտ-Արտուրում 10 ռուբլուց ընկաւ մինչև չորս ռուբլի, երբ շոգենաւն ընկաւ պաշարներով։ Չինացիները յայտարարում են, որ ռուսները օգոստոսի 25-ին սպասում են ընդհանուր յարձակմանը ցամաքից և ծովից։ Չինացիները վկայում են, որ Տօգօի պաշարումը իրօք տեղի չունի և շատ նաւեր կոնտրաբանդա են բերում։

ՋԱՆՋԻԲԱՐ, 24 օգոստոսի։ (Ռէյտէր)։ Գերմանական «Կրօնպրինց» շոգենաւը յայտարարում է, որ տեսաւ «Պետերբուրգը» և «Սմոլենսկը», որոնք ածուխ էին վերցնում տէրրիտորիալ ջրերում։ Բրիտանական «Ֆորտէ» կրէյսէրը գնաց անգլիական կառավարութեան պաշտօնական առաջարկութեամբ դադարեցնել չէզոք նաւերի կանգնեցնելը։ Կրէյսէրները «Ֆորտէի» առաջարկութեամբ հեռացան ռուսաց կառավարութեան հրամանները նրանց տալուց յետոյ։

ՖԻԼԻՊՊՈՊՕԼ, 24 օգոստոսի։ Շաքիր-փաշան հարկերի ապառիկները ներելու վերաբերմամբ լայն արտօնութիւններ տուեց ալբանցիներին խաղաղացնելու նպատակով, բայց որովհետև արտօնութիւնները չեն տարածված ուրիշ քրիստոնեաների վրա, այդ պատճառով նրանք խնդրում են ընդհանուր միջոցների գործադրութիւնը։—Մակեդոնացիները հերքում են աշնանը պատրաստվող շարժման լուրը։ Ազգաբնակութիւնը յոյս ունի և սպասում է իր վիճակի յայտնի բարւոքումների։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

24 մայիսի

Բօրսայի դիսկօնտը	6—7½%	»
Պետական 4% բենտան	91 7/8 —	»
I Խաղաք. տոմսերը	384— —	»
II » »	296— —	»
III » »	253— —	»
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	— — —	»
Բագուի » » »	— — —	»
Թիֆլիսի հող. բանկի 5%	89— —	»
» » » 4½%	— — —	»
Բագուի նաւթ. Ընկ.	440— —	»
Կասպիական Ընկ.	4800 —	»
Մանթաշեան և Ընկ.	200 —	»
Նոբէլի և Ընկ.	— — —	»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ա. Ա. ՄԱՅՈՒՐԵԱՆՑ
վերադարձաւ և վերսկսեց ընդունելութիւնը։
Վելիամինովսկայա փ. № 22. 4—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՓԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (Ե.Ո.) 16—100

Պանսիօն եւ Ուսումնարան
ՎԻԼԼԻԱՄՍԻ
Ընդունվում են գիշերօթիկ և երթևեկ երեխաներ պետական կրթական հիմնարկութիւնների համար պատրաստելու. առանձնապէս՝—ֆրանսերէն և գերմաներէն լեզուներից։
Александрополь, рядомъ съ городскимъ садомъ. (Ե. Հ. շ.) 8—10

!! ՊԱՀԱՆՋԵՑԷՔ !!
ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
ԵՂԲ. Գ. ԵՎ Մ.
ՓՐԻԴՈՆԵԱՆՑՆԵՐԻ
ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ
ԲՈՒԾԱՐԱՆԻ
Պատկերազարդ կատալոգը հայերէն լեզուով բուծարանը գտնվում է Անդրկովկասի երկաթուղու Սկրա կայարանի մօտ։ Կատալոգը ուղարկվում է ՋՐԻԱԲԱՐ։
Դիմել՝ Тифлисъ, М. Е. Придонову Сергіевская ул. (Հ. Կ.) 3—12

Լոյս են տեսել նոր տպագրութեամբ
ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆԻ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
Առաջին տարի . . 25 կ.
Երկրորդ տարի. . 30 »
Երրորդ տարի . . 40 »
Թոյլատրված է Կովկասի դպրոցներում գործածելու։
Դիմել կազմողիս՝ Александрополь, Ованесу Арабаджіанцъ.
Վաճառվում են բոլոր հայ գրավաճառների մօտ։ (Հ.) 3—4

Յովսէփ Մելիք-Զհաւեանի
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆՈՒՄ
ընդունում են գիշերօթիկ և երթևեկ աշակերտներ պատրաստելու բոլոր միջնակարգ դպրոցների համար. ընդունվում են նաև իբրև գիշերօթիկ դպրոցներում արդէն սովորողները։ Օտար լեզուներից աւանդվում են գերմաներէն և ֆրանսերէն։ Թիֆլիս, Բէհբութեան փողոց № 10, տ. պօլկ. Ստեփանեանի։ (Ե. Հ. Կ.) 3—10

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
դասագիրք
յարմարեցրաց պետական միջնակարգ դպրոցների դասընթացին։
Յովհաննես աւագ քահանայ Մարտիրոսեանցի
վաճառվում է «Կենտրոնական» և «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցներում։
Գինն է 35 կոպէկ։ 2—3

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ
Յատկապէս պատրաստած պետական դպրոցների համար, (Թոյլատրված հոգևոր և ուսումնարանական վարչութիւններից) աշխատասիրութիւն Եղնիկ աւագ քահ. Երզնկեանի։
I. Առաջին գրքոյկ, պատրաստական դասարանների համար «Գլխաւոր աղօթքները (իրանց բացատրութիւններով) և տօների համառօտ պատմութիւնները» 5-րդ տպ. գինն է 20 կոպէկ։
II. Երկրորդ գրքոյկ, «Հին-ուխտ» (30 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) 3-րդ տպ. գինն է 30 կոպէկ։
III. Երրորդ գրքոյկ, «Նոր-ուխտ» (32 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) գինն է 30 կոպէկ։
Գրավաճառների, ուսուցիչների համար 30% զեղչում, առանց ճանապարհածախքի։ Դիմել Тифлисъ, прот. Езнику Ерзинкянцъ կամ Тифлисъ, Центральный книжный магазинъ. (Ե. Հ. շ.) 11—25

ՎԱՌՎԱՌԷ ԵՒ ՍՏԵՓԱՆ ՍՄԲԱՏԵԱՆՑՆԵՐԻ
ուսումնարանում աւանդվում են՝ կրօն (հայոց լեզուով), ռուսաց լեզու, թուաբանութիւն, հայոց լեզու և գեղագրութիւն և տարվայ ընթացքում պատրաստվում են քննութեան երեխաներ զանազան միջնակարգ դպրոցների և Լազարեան ճեմարանի համար։
Ուսումն սկսվում է օգոստոսի 10-ից։ Բօտօվ Դ/վ, Տուրգենեվսկաեա փողոց, տուն եղբ. Ունանօվների, № 4. (Ա.Օ) 17—25

Էժան գիշերօթիկներ է ընդունում 8—10 տարեկան ժանուկների. հարցնել այրի Աննա Վանցեանին Զուղուրէթ, տուն Դանդուրեանցի № 34։ (Ե. Հ. շ.) 2—5

ԿԱՐ ՈՒ ՉԵՒԻ
ԴՊՐՈՑ
Ն. Գ. ԴԱՇՏՈՅԵԱՆԻ
(Ծննդ. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ)
Աշակերտուհիների ընդունելութիւնը ամեն այր օր առաւօտ, ժամ. 9-ից մինչև 3-ը։
Նոյն տեղը ընդունվում են մինչև 15 տարեկան հասակի գիշերօթիկներ երկու սեռից։
Могнинская ул. домъ Корганова № 7. Մողնու եկեղեցու հանդէպ։ (Ե. Հ.) 2—2

Լոյս է տեսել և վաճառվում է
Սրսեռ վարդապետ Ղլտճեանի
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔ
աշխատութիւնը. համառօտ տեսութիւններ միջազգային յարաբերութիւնների, պարտաւորութիւնների և օրէնքների մասին։
Գինն է 50 կոպէկ։
Դիմել Ալէքսանդրօպոլ Мкртичу Клитчяну և Թիֆլիսի գրավաճառներին։ 1—3

ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑ
ԵՒ
Մանկական Պարտէզ
Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(Ծննդ. Յովհաննէսեան)
Բերուբօվսկայա փողոց, տուն Շադինեանի № 38.
Երկու սեռի մանուկների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից։ (21,22,26,28,29,1,3,6,7,9) 3—10

Կենտրօնական
գրավաճառանոցումը, Թիֆլիս, վաճառվում են հետևեալ հաղուագիւտ հրատարակութիւնները.
«Փորձ» գրական հանդէսի բոլոր 4½ շրջանները 30 ր., առանձին ա. տ. 15 ր., հետևեալ 3½ տ.—15 ր.։
«Կռունկ» 4 տարվա 7 ր., զանազան տարիների առանձին հատորներ 1 ր. 50 կ.։
«Արձագանք» զանազան ամբողջ տարիներ։
Հ 9—10

Արիստակես եպիսկոպոս Սեդրակեանցի
«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ»
անունով պատմական տեսութիւնը. Մասն 1-ին։
Ծախվում է «Կենտրօնական» և «Գուտտէնբէրգ» գրախանութներում։
Գինն է 1 ր. 50 կոպէկ։

Լոյս տեսաւ
«ՇՔԵՂ» գեղարուեստական ալբոմի Դ. պրակը, բաղկացած ազգային հին յիշատակարանների 13 կտոր նկարներից, մեծ մասամբ Անիի աւերակներից։ «ՇՔԵՂ»-ի Ա. և Բ. պրակները բոլորովին սպառված են, Գ. պրակից մնում են միայն մի քանի օրինակներ։
Գների վրա կարևոր զեղչ.
ա—«Շքեղ»-ի Դ. պրակը, հատը . 1 ր. 20 կ.
բ—Բաց նամակն. ազգային հասարակ. դէմքերով, 85 տեսակ, 100-ը 2 » 50 »
Նոյնը 1000-ը 20 » —
գ—30×40 սմ. մեծութեամբ նկարներ (Հայրիկ, Սահակ, Մեսրոպ, Էջմիածին և 10 ուրիշ նկարներ ազգային գրագէտներից) հատը . . — 20 »
դ—30×40 սմ. մեծ. գեղար. նկարներ, հ.— 50 »
ե—18×24 սմ. » » » » — 30 »
Դիմել Тифлисъ, фототипія Гнуни—Маримъ.
Խնդրում ենք մեր գործակալներից բարեհաճել հաղորդելու մեզ, թէ «Շքեղ»-ի Դ. պրակից քանի՞ օրինակ հարկաւոր է ուղարկել իրանց։ (Հ. շ.) 3—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ 8-ՐԴ №-Ը—ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

1. Հեծեծանքները, Ա. Ահարոնեանի, 2. Այսպիսի դաշն, ոտան. Աւ. Իսահակեանի, 3. Վանի նահանգը ներկայումս, Ծերուկի, 4. Պատը, Լ. Անդրէեվի, թարգմ. Ա. Աթայեանի, 5. Դէրվիշները, Ե. Ֆրանգեանի, 6. Կանանց մասին, Մետերլինկի, թարգմ. ***-ի, 7. Վրաց կեանքից և գիւղականութիւնից.—Մի եռանդոտ վրացի-կաթոլիկ քահանայ։—Իշխան Ի. Ճաւճավաձէն իբրև բանաստեղծ։—Վրացերէն ընդարձակ բառարանի գործը, Տ. Փիրումեանի, 8. Ընկերները, Սալմանի, 9. Կովկասի թուրք մամուլը, Տիգրանի, 10. Գեղարուեստի աշխարհից.—Պարիզեան արձագանգներ, Հ. Ալիանաքի, 11. Քննադատութիւն և մատենախօսութիւն.—1) Հիւրշմանի՝ «Հին հայկական տեղերի անունները».—Դ.։ 2) «Ոստիկ».—Ա. Ա.։ 3) Դոկտ. Ֆրանց Շաֆֆեր՝ «Կիլիկիա».—Լ. Բ.։ 4) Սիմ. Բարիեան՝ «Բանաստեղծութիւններ».—Կ. Հ.։ 5) Խ. Բաբայեան՝ «Բանաստեղծութիւններ».—Կ. Հ.։ 6) «Շքեղ».—Ա. Ա.։ 7) Х. А. Вермишевъ. „Матеріалы для грузино-армянскихъ отноженій“.—Ա. Ա.։ 12) Նոր ստացված գրքեր, 13. Գիտութեան աշխարհից.—Բիւրեղի գարգացումը XIX դարում. Ս. Բալաղեանի։

Ներքին տեսութիւն.—Մեր մամուլի զարգացման մի խոշոր ուս։—Պօստային հաղորդակցութիւններից զուրկ վայրեր։—Ազատ ժամերի բուրժուական գործադրութիւն։—Գրականութիւնը ընտանեկան կեանքում։ Լ. Ս. Թագաժառանգի ծնունդը։—Բարձրագոյն մանիֆէստներ և հրամաններ։—Վիճակագրական դասընթացներ.—Կանանց բժշկական ինստ. ձեւափոխութիւնը։—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ։

15. Արտաքին տեսութիւն.—Ռուս-եապօնական պատերազմը։—Թիւրքիա, Լ. Ս., 16) Պարբերական հրատարակութիւններ, 17. Խմբագրութեան կողմից, 18. Յայտարարութիւններ, 19. Յաւելված. Զէյմս Մօրիէր՝ «Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեան։

ԲԱՆԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Վօգզալնի փողոց, տուն Թիֆլիսի առևտրական բանկի։
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է
1) Երկաթէ բալկաներ ամեն տեսակի և չափերի։
2) Տանիքի թիթեղներ (кровельное желѣзо) Սիբիրիայի և այլ գործարաններից։
3) Ցեմենտ Նովօրոսսիյսկի գործարաններից։
Մեծ քանակութեամբ գնողներին որոշ զեղչում է արվում։ Ընդունվում են պատուէրներ Անդրկովկասեան երկաթուղու բոլոր գծերի վրա յանձնելու պայմանով։
Նովօրոսսիյսկի Գելենջիկ ցեմենտը առաջարկվում է վագոնով գնողներին Զորս ռուբլի վաքսուն կոպէկ Թիֆլիսի կայարանում, իսկ ընկերութեան պահեստից Զորս ռուբլի եօթանասուն կոպէկ։ (Ե. Հ. շ.) 3—10

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՅՈՒՍԱՅԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական-բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։
Պարապմունքի առարկաներն են.
1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագրութիւն ամենավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համբիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Ռէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։
Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։
Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1904 թուի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս ամենայն ճաշից յետոյ՝ 60 ռուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։
Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ, 1904 թուի սեպտեմբերի 1-ից կը բացվեն քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (Ե. Հ. Կ.) 18—25

Дозволено цензурою. Тифлисъ, 25-го августа 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 15.